

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Ա. Մարոյանը ընդունել է սպորտի և երիտասարդության նախարար Գ. Ղազարյանին

11.08.2014

Օգոստոսի 11-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը աշխատանքային այցով ժամանել է Սյունիքի մարզ: Նախարարի այցը մեկնարկեց ՀՀ Սյունիքի մարզպետարանում կայացած խորհրդակցությամբ: Սյունիքի մարզպետի տեղակալ Աշոտ Մարոյանը ողջունելով նախարարին ու նրան ուղեկցող պատվիրակությանը, հույս հայտնեց, որ նախարարի հետ անկաշկանդ քննարկման արդյունքում կբարձրացվեն այն ցավոտ հարցերը, որոնց լուծումը թույլ կտան նոր որակի հասցնել Սյունիքի մարզական ձեռքբերումները: Նախարարը ևս դիմեց ներկաներին առաջարկելով՝ դիմել այն հարցերով, որոնց լուծումը տեղական ուժերով հնարավոր չէ: Պատասխանելով մարզադպրոցների պատասխանատուների հարցերին Գաբրիել Ղազարյանը նշեց, որ եթե անգամ լիարժեք բոլոր խնդիրները միանգամից լուծել հնարավոր չէ, ապա նվազագույն աշխատանքային պայմաններ կարող են ապահովել: Նա նաև խոստացավ տեղում ծանոթանալ բարձրացված խնդիրներին: Աշխատանքային խորհրդակցությունից հետո նախարարը այցելեց Սյունիքի մարզադպրոցներ: